

նոպատակով, Դարձյալ նոր անտեսական տարին բարերար և արդյունարեր զարձնելու ցանկությունն էր, որ արտահայտման այդ տեսքն էր ընդունել:

Բարեկենդանի տոնի զարնան, ընության դարբունքի, վար ու ցանքի, նոր սկսվող տնտեսական տարգա հետ կապված լինելն է վկայում Զանդեղություն (Խնձորեսկ) կաարգած հետելալ ծիսական արարությունը: Բուն Բարեկենդանի օրը 20—30 կին, տղամարդու շորեր հաղած, դյուդի ձորակում դութանին լժվելով, վարում էին գետի հունը Հավարգած բաղմությունը դվարձանում եխախուսում էր նրանց<sup>188</sup>:

Աղդադրական փաստերը նկատել են տալիս, որ Բարեկենդան տոնի ծիսական ողջ համակարդը համբանդանուր է եղել ամրող պատմական Հայաստանի համար: Աղդային ընապաշտական տոներից Բարեկենդանն է, որ հասել է մինչեւ մեր ըրերը և պահպանել իր համադրային ընույթը: Հայաստանի բոլոր աղդադրական շրջաններում էլ մինչեւ այժմ հիշվում է Բարեկենդանը, հիշվում է սիրով, որպես ամրող տարգա ամենաերջանիկ ըրերը: Սա ես ցույց է տալիս, որ Բարեկենդանը հնում եղել է համադրային ժողովրդական մեծ առնելիություն:

### ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԵՄՈՒՏ

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հոչակվեց իր առաջացումից երեք դար հետո, երբ արդեն հիմնականում ավարտվել էր նրա դադախարական և ծիսա-պաշտամութային կողմերի ծեավորումը:

Քրիստոնեության սինկրեաիկ բնույթը, որ նրա համաշխարհային կրոն դառնալու հիմնական նախադրյալներից էր, հարավորություն էր ընձեռում քրիստոնեություն ընդունած ամեն մի ժողովրդի որոշ շտփով պահել նաև իր աղդային, մինչ այդ մշակված կրոնական բրոնումները, զրանց հետ առնչվող առներն ու ծիսակատարությունները: Այդ երեսությը ճիշտ բրոնելու և զնահասելու համար հարկ է նկատի ունենալ, որ ինչպիս ամենուր, այնպիս էլ Հայաստանում, քրիստոնեությունը պետական կրոն հոչակելուց հետո, նրա քարողիշներն ու եկեղեցական հայրերը կազմակերպված, պետության կողմից հովանավորվող պայքար են հայտարարում նախաքրիստոնեական հավատալիքների բոլոր դրսերումների ղեմ<sup>1</sup>:

Ասկայն, ինչպիս այլ ժողովուրդների օրինակը ես ցույց է տվել, հաջողության հասնելու ավելի լուրջ առհավաաշշանն էր ոչ թե ուղղակի պայքարը, այլ քրիստոնեական ուսմունքի և ժողովրդական հավատալիքների հարավոր միաձուլումը<sup>2</sup>: Քրիստոնեական եկեղեցու ներկայացու-

ցիները Հայաստանում չեն կարող սա չհասկանալ և դորձնական միջոցների շդիմել:

Տոնական օրացույցը քրիստոնեական կրոնին հարմարեցնելու անհրաժեշտությունը դուցվում էր, նախ, պաշտոնական, տոմարական հարցերը լուծելու նպաակով, և հետո, որ ամենակարեռն էր, տոների հետ կապված ժողովրդի կենցադում մեծ դեր կատարող ծիսական սովորույթներին քրիստոնեական երանդ աալու համար: Այդ տոռումով ուշադրության կենարոնում էր աարեկան առնական ցիկլը: Ժողովրդական տոների մեծ մասը հարմարեցվում էր քրիստոնեական կրոնի պահանջներին, իսկ այն, ինչ հնարավոր չէր հարմարեցնել, պաշտոնապես չէր ընդունվում:

Ամանորի մինչքրիստոնեական տոներից ոչ մեկը՝ ոչ Բարեկենդանը, ոչ էլ նավասարդը, քրիստոնեական եկեղեցին մինչեւ վերջ լրնդունեց: Նույնիսկ XVIII դարից հետո էլ, երբ Սիմեոն Երեանցի կաթողիկոսի մշակած եկեղեցական առմարում նոր աարի-աարեմուտ է հոչակվում Քրիստոսի ծնունդը, ժողովուրդը շարունակում է պահպանել իր դարավոր սովորույթը, երբ Ամանորը համբանդանում էր ընության դարթոնքին, զարնան սկզբին և ապա աշնանային բերքահավաքին:

Սակայն Քրիստոսի ծնունդը աարվա սկիզբ համարող առմարը պաշտոնապես ընդունվելուց հետո, այն ասաիճանարար մտնում է ժողովրդի կենցադի մեջ, ներառնելով մինչ այդ դուցություն ունեցող նոր աարվա առնակաարություններին ուղեկցող ծեսերը: Ամանորին ուղեկցող ծիսական

(Сб. Музея антропологии и этнографии, т. VIII); М. Горький, «О реингиозно мифологическом моменте в эпосе древних («Литературная учеба», 1936, № 7, стр. 13—14); М. Бахтин, «Творчество Фр. Рабле», М., 1965, стр. 13.

<sup>188</sup> «Ազգագրական հանգեստ», 1898, հ. 7, գ. 2, էջ 107:  
<sup>1</sup> Տե՛ս Հ. Մ. Նիկոլյսկի, «Եվрейские и христианские приезды», 1931, գրքում: Տե՛ս նաև Պ. Պ. Բնալը, «Возникновение христианства», СПб., 1918; Բ. Գ. Богораз-Тан, «Христианство в свете этнографии», М.—Л., 1928; Պ. А. Добролюбов, «Избранные филологические сочинения», т. I, М., 1948, стр. 144—145.

<sup>2</sup> Հ. Մ. Նիկոլյսկի, «Եվрейские...», стр. 133; Բ. Բогораз-Тан, «Христианство...», Դ. Կ. Զելենին, «Табу» слов у народов восточной Европы и Северной Азии

Համակարգը հարատեսէլ է քրիստոնեական կրոնի ավանդույթների հետ՝ ծեսերի մի մասի շադախմամբ և հեթանոսական շեշտված երանդով քրիստոնեական նոր տարուն փոխանցվելով։ Փորձենք բացահայտել տարրեր ժամանակներից, տարրեր պատճառներով քրիստոնեական նոր արարված միացված Ամանորի նախորդ տոնակատարություններից սերող ծեսերու։

XIX դ. ժողովրդի մեջ ամենատարածված և սովորական անվանումը Շնոր տարինս է, թեպետ որոշ դեպքերում դործածական էին նաև ԱԱմանոր և անվասարդա անվանումները։ Բացի անոր տարիից, ԱԱմանորս, անվասարդա անվանումներից, աղօգագրական որոշ շրջաններում նոր տարվան զուգահեռ դործածական է նաև Կաղանդա տնվանումը<sup>3</sup>։ Նոր տարվա օրն ընդունված միմյանց շնորհավորելու սովորությունը կոչում էին կաղընդելու<sup>4</sup>, այդ օրն իրար տրվող նվերը՝ կաղնդերք, իսկ երդվող երդը՝ կալանդու։

Զավախքում կաղընդել հասկանում էին նոր տարվա առթիվ իրար շնորհավորելու, որ արվում էր մեծ մասամբ միմյանց մրգով հյուրասիրելով։ Այստեղ, նոր տարվա առավոյան, նահապետակուն ընտանիքը հավաքվում էր իր ամրող կաղմով։ աան հայրն ու մայրը նստում էին օշամի դլումը, մյուսները ավագության կարդով մոտենում էին, նրանց ձեռքը համրուրելով շնորհավորում նոր տարին և նվերներ ստանալով քիսաներն ու վասինները, միմյանց մրգով կաղընդում՝ շնորհավորում էին։ Ապլան<sup>5</sup> նորահարսին մի ուսուպիա<sup>6</sup> էր ընծայում։ Տաղըները<sup>7</sup> նույնպես նորահարսին միրգ կամ այլ րան էին նվիրում։ Նահապետական ընտանիքում ընդունված կարդի համաձայն, ամուսիններն ամոթ համարելով, իրենց կանանց շէին շնորհավորում<sup>8</sup>։

<sup>3</sup> Կաղանդ՝ ծագում է լատիներեն Calendae (Կոլել) րատից, որ հայերնում սաացել է ամեն ամսի և նոր տարվա առաջին օրվա նշանակությունու Ան։ Եիրակացու մոռ կարդում էնք. «Զին»<sup>9</sup> է կաղանդ և կաղնդիկոս։ Կաղանդ ամսամուա է և կաղանդիկոսն նախասկրնակ օր ապրոյն։ Ան։ Եիրակացի, Տիեզերագիտակություն և առմար, երեան, 1940, է 69, նաև նոր բառգիրք Հայկապահն լեզվի, 4. 1, է 1037, Ա. Մալասյան, Հայոց լեզվի բացարական բառարան, 4. 2, է 371, Ա. Պողոսյան, նոր ապրոյ աօնը..., է 29.

<sup>4</sup> «Ապգագրական հանդես», 1897, հ. Բ, է 248։ Ար. Ալբոյանիան, նշվ. աշխ., է 287։

<sup>5</sup> «Ապգագրական հանդես», 1902, հ. IX, է 2 5։

<sup>6</sup> Ապլա (բարրառային)<sup>10</sup> մեծ մայր։

<sup>7</sup> Ուսուպիա՝ գլուխ ոսկի։

<sup>8</sup> Տագը՝ ամուսուլ եզրայր։

<sup>9</sup> «Ապգագրական հանդես», 1897, հ. Բ, է 248։

Համշենցի հայերի մեջ ընդունված էր այդ օրը ամեն ինչ շնորհավորելու։ Շնորհավորում էին իրար, դոմերն ու անասունները, մթերանոցները (կորորներ) և բոլորին ու ամեն ինչի նոր բախտ ու հաջողություն մաղթում։ Շնորհավորողներն, ընդունվությունը էր, իրար հյուրասիրում էին չոր մրգով՝ կաղին, եփած լաղթ (եղիպացորեն), ընկույղ և այլն<sup>11</sup>։

Աերաստիայի շրջակալքի գլուզերում տնասուններին կաղանդելու պարտականությունն ընկնում էր տանտիրուհու վրա։ Նոր տարվա առավոտյան նա քսթքսթալով, որքան էլ ծեր լիներ, մըտնում էր դոմ և կաղանդելու սկսում թոշուններից։ արտասաննելով այս մաղթերգը։

Զու, զու, զու, ծաղուկներ, իմ սիրելի վառեկներ, Մօտ եկեք տամ ձեղ հատիկ-որ տաք ինձ շտահավկիթ,<sup>12</sup>

Զու, զու, զու, թոշնիկներ, կարմիր, ճերմակ հավուկներ, եկեք կաղնտեմ ձեղ ալ-տամ ձեղ հատիկ, զուր զուրաւ։

Իսկ անասուններին կաղանդում էր, տալով նրանց նույն հատիկից։

Եկեք սիրուն րուղիկներ (հորթ)-սիրամ (մուդ կարմիր) ու կարմիր զույններով, Զեղի ալ տամ հատիկ, կեր-որ կաղնչեք եմ ըստերու դուք ալ ապրիք տարիներ-ձեր սիրական զավակով, Համրուրեմ ձեր ճակատներ-սիւալիւ պուրմա կոտոշներ<sup>13</sup>։

Նոր նախիշեանում նոր տարին անվանում էին Կաղանդ, իսկ այդ օրն ընդունված ընծայաբերությունները՝ կաղնդելու։ Այստեղ նույնպես ընդունված էր այդ օրն իրար և ամեն ինչ շնորհավորություններու կաղնդելու։ Այստեղից, այսաեղ սովորություն էր պատրաստել Կաղանդա անունով քտցրավենի, որը նոր տարվա տոնական սեղանի զարդն էր<sup>14</sup>, Այդ քտցրավենին պատրաստում էր այլ աղդադրական շրջաններում ևս, և համարվում էր այդ օրվա խորհրդանիշը։ Այսպես էր, օրինակ, լոռիւմ, միայն առանց քտցրավենու սկաղանդա անվան<sup>15</sup>։

<sup>10</sup> «Ապգագրական հանդես», 1900, հ. Զ, է 155։

<sup>11</sup> Ա. Պողոսյան, նոր Տարւոյ առնը..., է 299։

<sup>12</sup> «Ապգագրական հանդես», 1902, հ. IX, է 5—0, Ա. Ս. Օդարացյան, 1959 թ. Ռուսովի մարզի Մյասնիկյանի շրջանի գիտարշավ, ԱՐԱ, ա. № 1, է 26։

<sup>13</sup> «Ապգագրական հանդես», 1903, հ. 10, է 249։

Էվլուսկում (Կեսարիա) իրար կաղնդելու՝ նոր տարվա առթիվ իրար շնորհավորելու, սովորույթը շատ հետաքրքիր ախսքով է մեղ հասել: Նոր տարվա առավոտյան, տան ծերուկ մասիկը<sup>14</sup> հաց էր տանում առյուր և գուրով<sup>15</sup> գցում, որպեսող ոզուրը կազրնաեն, մի ուրիշն էլ այն վերցնում և տալիս էր անասուններին, որպեսզի նրանց «կաղընտես»<sup>16</sup>:

Հարք գավառում (Բուլանրի) միմյանց շնորհավորում էին այսպես. «Ծնորհավոր նոր աարի և բարի կաղանդա»<sup>17</sup>, Տանահիկինն ու տանտերը տան անդամներին միրդ նվիրելով էին շնորհավորում, նրանք էլ նույն ձևով միմյանց և այդ սովորույթը կոչվում էր կաղընդել»<sup>18</sup>:

Հայերի մեջ կաղընդելու այդ համադդային սովորույթը, դրեթե նույն հանդիսավոր ծիսակաարությամբ, կրկնվում էր նաև Քրիստոսի ծննդի և Աստվածահայանության տոներին:

Վ. Վ. Տեր-Մինասյանը Ծննդի և Աստվածահայտության օրն իրար շնորհավորելու համարում է «տիմարական», նկատի ունենալով, որ դա աղջային սովորույթներին չի առնվազում<sup>19</sup>:

Կաղնդելու այդ նույն ծիսական սովորույթը, դրեթե նույն բովանդակությամբ, դոյություն է ունեցել նաև վրացիների մեջ: Այդպիսի ընդհանրությունը կարելի է հասկանալ, եթե նկատի ունենանք, որ այդ ծիսական սովորույթն իր առաջացումով կարող է կապված լինել կովկասյան ժողովուրդների ձեւավորման ամենանախնական ժամանակաշրջանի հետ: Կարելի է ենթադրել, որ կաղընդելու այս սովորույթը կովկասի տեղաբնիկ ժողովուրդներն ունեցել են վաղնջական ժամանակներից և ապա հաղորդել քրիստոնեական Ամանորին:

Ուշագրավ է հատկապես XIX դ. ծիսային սովորույթների, տվյալ դեպքում՝ նոր աարվա տոնակաարության ծիսակարդի և րմբոնումների նմանությունը, որ, անշուշա, ընդհանուր հիմք ունենուցից բացի, կարող էր սլայմանավորված լինել նաև դարեր շարունակ կողք-կողքի, սոցիալ-

<sup>14</sup> Մամիկ՝ մեծ մայր, տաս:

<sup>15</sup> Գուռ՝ այստեղ՝ ազրուրի մոտ սարքած անասուններին շրելու շրավազան:

<sup>16</sup> Ա. Ալպայանյան, նշվ. աշխ., էլ 1759.

<sup>17</sup> Ի միջի ալոց ասենք, որ այդ արտաւայտությունը կլիւ ընդհանրական է ամրող պատմական Հայաստանում, Թեպեա բոլոր ազգագրական շրաների վերաբերյալ չէ, որ այն հիշատակում է բանհավաքների կողմից (Ա. Օ.):

<sup>18</sup> «Ազգագրական հանդես» 1900, հ. Զ, էլ 56:

<sup>19</sup> Վ. Վ. Տեր-Մինասյան, Անգիր դպրություն... հ. Բ, էլ 17:

տնտեսական և քաղաքական նույնանմտն պատմաններով:

Քարթվելներն, օրինակ, մատուցարանին դրված ուտելիքներով, որը կոչվում էր «արրամիանի», կտղնդում էին գոմր, բակր, տնասուններին: Կաղընդելիս տան մեծք ձուն դնում էր կենդանիների վրա և ասում. «Եղեք այսպես կլոր և գեր, ինչպես այս ձուն»:

Ինդիլոյների, ինչպես նաև գուրիացիների մեջ նույնպես տարածված է եղել այդ սովորույթը:

Իմերեթիայում այդ սովորույթներն առավել հետաքրքիր տեսք էին բնդունել: Նոր տարվա առթիվ այցելություններն այստեղ առհասարակ ընդունված չէին: Նույնիսկ անծանոթ անցորդը չէր կարող ապաստան խնդրել<sup>20</sup>: Միակ ցանկալի հյուրը «Մեապերիսեն» էր, բառացի՝ շնորհավորողը, որն ընարվում էր ամրող դյուդի կողմից, ամենարարի, համեսա մեկր, որի առաքը հաջող էր»: Մեապերիսեի հետ էր կապված դոլիք տնտեսական տարվա բարեհաջողությունն ու առատությունն ապահովելուն նվիրված մի ծես: Նոր տարվա (կամ հաշորդ) օրը, մտնելով որևէ առն, մկաբրիսեն վերցնում էր նախօրոք պատրաստված ցորենով լի ամանը և հերթով րուռ առ րուռ շաղ աալիս բնակարանի շուրջը. «...այսքան կով, եղ, ձի, ոչխար, հացի ամրար, գինու կարաս (թվարկում էր այն բոլոր բարիքները, որ կարող էր ցանկալի լինել) և նույնքան աարի խաղաղ ու հրշանիկ կյանք այս բնաանիքներն: Ապա շնորհավորում էր տնացիներին նոր տարվա առթիվ, մի կարոր րան ուտում և դնում նույնը մի այլ բնտանիքում կրկնելու<sup>21</sup>:

Կերը բերված ծիսական սովորույթների մեջ հատուկ ուշադրության են արժանի շնորհավորա-

<sup>20</sup> Եթե իմերեթների մեջ չար աթից պաշապանվելու նպաակով արգելվում էր որևէ այցելություն, հասկալիս անծանոթ, չփորձված մեկի ներկայությունը, ապա հայերի մեջ նույն նպատակով ծիսական սեզանին մասնակից էին դարձվում բոլորը: Ազգագրական նյոթերից բացի, այս սովորույթը հավաստված է նաև մատենագրորեն: Տե՛ս նաև Մ. Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, գ. Զ, դ. Եթ, էլ 186:

<sup>21</sup> Խոկ XIX դ. այդ մտայնությունը արտահայտվում էր Ամանորի ծիսական սեզանին բոլորին մասնակից անելու պարապեկով:

<sup>22</sup> Վրացիների նոր աարվա տոնակատարության մասին աեղկություններ կարելի է քազել՝ Վ. Վ. Բարձելինձե, «По этапам развития древнейших религиозных верований и обрядового графического искусства грузинских племен», Тбилиси, 1957; А. Хаханов, «Празднование нового года у грузин», «Этнографическое обозрение», 1889, кн. 3, стр. 35; В. Окропиров, «Новый год в Грузии», «Новое обозрение», 1895, № 3790.

կան բանածեները, որոնք կրում են բնապաշտական ռազմափարախոսության պարզ արտահայտված հետքեր։ Այդ երեսուցին առավել հսանակորեն դրսելորպում է կատարման ժամանակով քրիստոնեական ամանորի հետ կապված ծիսական երդաշարի մեջ, որոնց քննարկումը կտեսնենք ստորև։

Նախաքրիստոնեական Նոր ապրվա առնա-  
կատարությանն առհասարակ ընորոշ էր նախ-  
նադարյան հմայությունից եկող ռառաջինից  
կախարդական հատկության հավաալիքը: Երկ-  
րագործական տոնական օրացուցում Ամանորի  
ունեցած կարերը աեղն ու դրան աղերսվող սպա-  
սելիքների իրականացումն ապահովող ծիսական  
սովորույթներն այլ րան չէին, քան առաջին օրվա,  
առաջին պտղի, առաջին հանդիպման, առհասա-  
րակ ռառաջինից նկամամը ունեցած նախնական  
հմայական հավաափի մի ցայտուն արտահայտու-  
թյուն, ըստ որի կարծում էին, թե ռառաջիննա  
ունի իրենից հետո եկող նման առարկաների և  
երեսույթների վրա ներդործելու դյութական հաա-  
կություն<sup>22</sup>:

«**Ապազին օրվան» հմայական նշանակություն  
վերադրելու դադարիարն է, որ այդպես հանդի-  
սավոր ու նշանակալից էր դարձնում Ամանորի  
տոնակատարությունը: Այդ մաայնության հեաե-  
վանքն էր Ամանորին ամրող անտեսական աար-  
վա վերաբերյալ գուշակություններ անելը, վեր-  
շինիս միջոցով իրենց սպասվող ճակատագիրն  
իմանալուն նվիրված ծեսերի առկայությունը  
Ամանորի ծիսակարդում: Անհրաժեշտ է, նշել, որ  
գուշակությունների հետ կապված ծեսերը ցրված  
են ամրող տարեկան տոնացուցում: Ասկայն առ-  
նացուցում ցրված ե այս ու այն առնի, ծեսի հետ  
կապված գուշակություններն ունեն ավելի որոշա-  
կի, կոնկրետ բնույթ, անմիջականորեն կապվում  
են աարվա եղանակներին ե նրանց ուղղեցող մար-  
դու աշխաաանքային ու կենցաղային դործունեու-  
թյանը: Իսկ ամանորի ծիսական համակարդի մեջ  
մտնող «առաջինի» հմայական հատկության նր-  
կաամամր ունեցած հավաաից բխող գուշակու-  
թյունները վերաբերում են ամրող անաեսական  
աարվան, վերջինիս աականովվածության ասաի-  
ճանը նախապես իմանալու կամ համապաաաս-  
խան ձեռվ բնության ուժերի վրա ներգործելու  
ցանկությանը: Այս բնույթի ծեսերից որոշ մասը  
անցել է քրիստոնեական Ամանորին: Դրանցից ա-**

մենից տարածվածն ու հարատեղը որոշ տղամարդական շրջաններում «տարիի» կոչվող՝<sup>3</sup> (այլ տեղերում այլ անուններով՝կրկենի<sup>4</sup> կամ առանց անունի), կլոր, բնկուղով և զանազան քաղցրեղենով դարդարված հացի միջոցով տարվա առատությունը (րարաքյաթ) որոշելու ծիսական սովորությն է։ Զավախքում այս սովորուկիթը կար՝ տանտիկինը կադանդի արշալույսին «տարիին» տեփուրի մեջ<sup>5</sup> դնելով, վրան մեզր էր լցնում և հարսների հետ տնից դուրս գալով, դավաղանով խփում էր գետնին և երեք անդամ ասում. «Դուվաթ, սարն ես, ձորն ես, արի տուն» և նույն կարգով ներս զալիս, լեղըր բաժանում ամենքին, որ նոր տարին քաղցրը անցներ, իսկ «տարիին» պահում էին երեկոյան դուշակության համար<sup>26</sup>,

«Ճարի» կոչվող այդ հացը նոր նախիջեանում, օրինակ, ավելի որոշակիորեն էր պահել իր հին արագին տեսքը, որ ուղղակիորեն խոսում է այն Ամանորին նվիրված լինելու մասին:

π...Σωτηρίνα,—ηρπιτ μ ήρ. Σωκράτηηρ,—ηρ  
τωπρίζω ισικάκιαν ίχωνν έ, μή μεδ ροπηργή β  
απφωρωκ ζωγ έ, ή αγνώστου έ γηνψωσ, ηρ φρων  
ψωρη λέβηψην ήρητιτ μ ήρ φωνή μωσηρη κωμ  
έγητηλαψηρητητην: Αιη μωσηρη λέων δηπιφέρη  
θηψη λένητιτ έ κωμ 12 ζωα, αωρηλα 12 αμθι-  
νηρη θηψη, κωμ αων μεδ ήηηασ ανηηαμηηηρη  
θηψη ζωμημωτη<sup>27</sup>,

Այլ աղդադրական ջրջաններում դուշակության հացը լինում էր կլոր, չոր մրգեղենով և բնկույզով ղարդարված, որի մեջ մեծ մասամբ դրվում էր դրամ և այդպես թխվում։ Այդ հացի միջոցով Ամանորի դուշակությունը կատարվում էր այսպես։ Հացը կարում էին ընաանիքի անդամների թվին համապատասխան (իսկ համշենցիները նաև անասուններն էին նկատի ունենում)<sup>28</sup> և բաժանում յուրաքանչյուրին<sup>29</sup>։ Ապա հանդիսավորու-

<sup>23</sup> «Աղջադրական հանգես», 1897, հ. Բ, էջ 246, նույնը՝ 1902, հ. IX, էջ 5, «Եմինյան աղջադրական տղղվածութ, հ. Ա, էջ 261—263:

<sup>24</sup> Կրկենի, նույնը, 1898, հ. 9, գ. 1, էլ. 249.

<sup>25</sup> «Ազգագրական հանդես», 1897, հ. Բ, էջ 248—249,

#### **28. ՏԵՂՈՒՐ-ՎԻՃՄԻՑ պատրաստած մատուցարան (Ա. Օ.)**

26 Նույն աեգում:

27 «Աղքագրական հանգես», 1902, հ. IX, էլ 5: Ամանորին Նվիրված այդ հացով ապրվող գուշակությունն այժմ գորս է եկել կենցազից: Միայն ծերերն են հիշում, որ իրենց մանկության ապրիներին եղել է այդ սպորտություն:

28 Նույն տեղում, 1900, և. 2, էջ 155,

29 Վարանգայում այդ ծեսը կատարվում էր Քրիստոսի  
ծննդյան տոնին, Խթման նախաընթաց օրը:

Գուշակության հացը կոչվում էր «Շովաբ կրկենիք»: «Աղ-  
գագրական հանգիս», 1898, հ. 9, գ. 1, էջ 338—339:

թյամբ, լուսության մեջ ուստում էին իրենց բաժիններու ՌԱՄ բաժնից դրամը գուրս գար, նա համարվում էր րախտավոր և այդ ամրող տարվա րարեկեցությունն ու հաջողությունը նրան էր վերագրվում և նրանից ակնկալվում երջանիկ ընարյալը դրամը պահում էր իր քսակում, հավատացած, որ այն ամրող տարին լիբը կլինի Որոշ տեղերում գրամի փոխարեն հացի մեջ գնում էին կոճակ, ուաելիք կամ պարզապես որեւէ փտյուն իր, որն, ըստ երեւութին, առավել հնից եկող սովորույթ է, Քրիստոնեական հավելուրդ է այն, որ դրամն ում րաժին էր ընկնում, նա գնում էր եկեղեցի, նույն դրամով մոմ գնում և վառում սրբերի առաջ, որ նրանք ամրող բնտանիքին հաջողություն և բարեկեցություն պարգեեին, թեպեա այդ սովորույթն էլ իր հիմքում ընապաշական էր, զոհաբերական ծեսի մի վերապրուկ: Այդ ծեսի խոսքային արտահայտությունը, ինչպես կտեսնենք ստորեւ, առկա է նաև Ամանորի երգերի մեջ, ուր տնետուն շրջող պատանիներն իրենց մաղթանքների դիմաց ամենից շատ և համառուցն պահանջում էին գաթա՝ նոր արավա սիմվոլն ու բարեկեցության գուշակության հիմնական միջոցը: Գուշակության հմայություն ծեսերն այլ ազդադրական շըշաններում ընդունում էին այլեալլ ձեերի Համշեցիներն, օրինակ, նոր աարվա նախորդ օրը մի խնձորի կամ, եթե խնձոր շդանվեր, շագանակի մեջ արծաթե դրամ էին գնում և նախտպես պատրասաված սեղանին թողնում ամրող գիշերը, որտեղ լոր մրգերից բացի, լինում էր նաև մի ամանով զուր և բոխի ծառի երկու լյուզ: Առավոտյան խնձորը ռաժանում էին և ում որ դրամը բաժին ընկներ, դրպանը լոր միրդ էր լցնում, սեղանը վերցնում և մի փոքր տղայի հեա գնում դոմ, առաջ աջ ուաը ներս գնում, ներս էր մտնում, սեղանը զնում դեանին, գրպանից հանում բերած լոր միրդը և շադ աալիս անասունների վրա, ասելով: «...խաա ու խլինչ (խատուտիկ) եք ու բացլիք, մեղուի պես շաանաք»: Սեղանի վրայից մի-մի կաոր բան էին վերցնում, բառում և արջաոը կապելով, սեղանի հետ բերում տուն: Արջաոի առաջ կեր էին գնում, եղջյուրներին մոմ վառում, իրենք էլ նասում՝ դոմից բերած սեղանի բարիքներն ուաելու<sup>30</sup>:

Ուշազրավ է քրիստոնեական նոր աարուն ուղեկցող գուշակության ծիսական սովորույթներից մեկ ուրիշը, որ տարածված էր Հայաստանի գրեթե բոլոր ազդագրական շըշաններում, նոր աարվա

նտխօրյակին ձեավոր փոքրիկ հացեր էին թխում և դրանցով կամ գուշակություններ անում, կամ էլ այդ հացերով իրար նոր տարի շնորհավորում: Համշեցիների մեջ այդ սովորույթը կապվում էր վերը նկարագրված «տարի» կոչվող հացով գուշակության հետ:

Այլ շրջաններում նոր տարվա նախօրյակին գերգաստանի հարաները խմորից իրենց համար պատրաստաւմ էին քսակներ, ինչպես նաև եզների անունով լուծ, կովերի անունով պտուկներ, ցորենի հոր՝ մեջը ցորեն, դարու հոր՝ մեջը գարի, հավերի շրի աման և առնասարակ այն ամենը, ինչ տնտեսության մեջ որեւէ գեր կամ նշանակություն ուներ: Այս ըոլորր գերգաստանի մեծ մայրը իշեցնում էր թոնիր և ծածկում: Մի քիչ հետո ընաանիքի անդամները հավաքվում էին թոնրի շուրջը, մեծ մայրը բացում էր այն և սկսում գրանք մեկ առ մեկ գուրս բերել: Ցորաքանչյուրն անհամբերությամբ սպասում էր, թե իր համար ինչ գուշակելու թոնրից գուրս բերված ձեավոր հացը: Եվ գուշակում էին այսպես՝ եթե քսակներն սւոած էին լինում, ուրեմն՝ դրանց տերերը հարըստանալու էին, իսկ եթե կուչ եկած, լնղհակառակը, աղքատանալու էին, եթե կանանց աիկնիկներն ուոչում էին՝ զավակ էին ունենալու և այլն: Այսպիսով, ձեավոր այդ հացերի ուոչելը բախտակության, հաջողության նշան էր համարվում, կուչ գալը՝ գժրախառության<sup>31</sup>: Հաջորդ օրը, աան մեծ որդին երեք բաղարշ վերցրած, գնում էր գեաը, դրանք թրջում և տուն բերելով, մասմաս բաժանում անասուններին, դրա հեա նաև նախօրդ օրը թոնրում թխված լուծը, պուտուկը, հորերը և այլ ձեավոր հացերը<sup>32</sup>:

Նոր նախշեանում այդ նույն սովորության առկայությունն է վկայում ե. Շահաղիղը. «...հաակապես իբրեւ նոր աարու նշան, կատարում են «կաղանդը», «Ճարին»<sup>33</sup> և զանաղան պասուց խմորեղեն՝ սպաթա, սսամսա», «քսակներ», մաղեր, հյուսեր, իսկ դյուղերում, բացի դրանից և «խալազ», կովի կուրծքեր, ցորենի հորեր և անասունների սմրակներ: Մի քիչ հետո ավելացնում է. «...սխտլաշ», որ պատրաստաւմ են

<sup>31</sup> Այս սովորույթի հետ հանգիպեցին 1959 թ. Մարտունու շըշանի Վերին Ղարանլուգ (այժմ՝ Գեղովիա) գյուղում, Գեորգ Պողոսյանի վկայությամբ, մինչև 1930-ական թվականները կենցազում գեռնս կենցանի է եղել այդ սովորույթը, իսկ հետո աստիճանարար վերացել է: Տե՛ս Ա. Աղաբաշյան, 1959 թ. գիաարշավ, ԱԲԱ, տեար № 6, էջ 102,

<sup>32</sup> «Ազգազրական հանգես», 1897, հ. Բ, էջ 246:

<sup>33</sup> «Ազգազրական հանգես», 1902, հ. Խ, էջ 5:

միայն գյուղացիները, կիսալուսնաձև, կամ կլորակ, մեջը ծակ հաց է, զարդարված ղանաղան հյուսվածքներով ու օրինակներով, իսկ մաղի հյուսերը, քսակները, կուրծքերը, ցորենի հորերը և սմբակները, որոնցից առաջինը և երկրորդը դիմավորապես պատրաստում են քաղաքացիները, իսկ մյուսները միայն գյուղացիները, նույն առարկաների ձևով շինված խմորեղեններ են, որոնք արտահայտում են ժողովրդի պես-պես բաղձանքներ՝ որ տան մեջ դտնված աղջիկների մաղերը երկար լինեն, աղամարդկանց քսակները լիքը փողով, կովերն առատ կաթ տան, անասուններն առողջ լինեն և ցորենի հորերը լիքը ցորենով<sup>34</sup>:

Բալուում նույնպես սովորույթ է եղել Ամանորի համար թիել ղանաղան հացեր՝ կենդանիների կճղակների, տնային և երկրադրժական գործիքների նման՝ խոփի, եթե տանտերը հողադրժ էր, կկոց, եթե ոստայնակ էր, ուրագ, սղոց, եթե արհեստավոր էր, տանտիկնոց մատի մատնոցը, մկրատ և ալյն, և ալյն<sup>35</sup>,

Այդ նույն նպատակին են ծառայել լոռիում թխվող կլկա կամ զուլաճ կոչվող կլոր, մեջը ծակ հացերը, որոնք հացի հորեր են խորհրդանշելի նոր տարվա օրը դրանք անց էին կացնում դոմեջի և եղան եղջյուրներին, որպեսդի այդ աարի հորը լցվի ցորենով<sup>36</sup>, Ընդունված է եղել նաև փոքրիկ, մարդակերպ հացիկներ թիսել, աչքերի, բերանի և կրծքին ծալած ձեռքերի վրա շամիչներ դրած, որ նոր տարվա օրը տալիս էին երեխաներին, Այդ հացիկները կոչվում էին Ասիլ-րա-

սիլ<sup>37</sup>, ջավախսքում այդ մարդակերպ հացի տիկ-նիկներն անվանվել են Վասիլ<sup>38</sup>,

Բասիլ-ը սասիլիսկոս բառի հապավված ձևն է, որ նշանակում է արքայիկ օձ<sup>39</sup>: Հնում այդ օձին վերագրել են հայացքով սպանելու առասպեկան կարողություն, Ըստ Հր. Աճառյանի, Վասիլիսկոսը Բասիլիսկոս հունտրեն բառի ետին տառադարձությունն է<sup>40</sup>: Հնարավոր է, որ հայերնում, մանավանդ ժողովրդական լեղվում, Բասիլիսկոս և Վասիլիսկոս բառերը կորցնեին վերչավորությունները և հանգես դային միայն Բասիլ ու Վասիլ ձեերով Նկատի ունենանք, որ որոշ հեղինակներ ժողովրդի կենցաղում գոյություն ունեցող Ասիլ և Բասիլ (Վասիլ) անվանումների հետ կապված հավատալիքների մեջ տեսնում են եկեղեցական նշանավոր գործիլ Բարսեղ Կեսարացու անվան սրբագործման արձագանքները<sup>41</sup>,

Լեզվաբանները դտնում են, որ Ասիլ-Բասիլ բառի մեջ Ասիլ բառի սկզբնական ձեր եղել է Ասիդ, որը նմանաձայնության (ալիտերացիա) օրենքի համաձայն, բասիլի աղղեցությամբ, դարձել է ասիլ ծրբայերենից նույնությամբ հունարենին անցած ասիդի բառի վերաբերյալ տարրեր մեկնություններ կան, Զժխտելով նրա թուզոն լինելը, տարրեր մեկնիչներ տարրեր կերպ են բացատրում այն՝ հոպոպ, բաղե, ջայլամ, կարապ, արագիլ և ալյն<sup>42</sup>,

Բառի լեզվական ստուդարանությունից անկախ, նկատի ունենալով միայն նրա ընդհանուր իմասար, ժողովուրդը կարող էր այդ ծիսական սովորույթը ներկայացնող ասիդ բառի տակ նկատի ունենալ հենց այն թուզոնը, որն իր համար գարնան, ընության զարթոնքի խորհրդանշան էր, իսկ, ինչպես հայանի է, արագիլին վերագրվող ժողովրդական ծիսական ովկորույթները թե էությամբ և թե կատարման ժամանակով կապվում էին ընապաշտական Ամանորի՝ Բարեկանզանի, դարնանային առնի հետ:

<sup>34</sup> «Ազգագրական հանդես», 1002, հ. IX, էջ 7.

<sup>35</sup> Հ. Սարգսյան, Բալու..., էջ 14: Նոր աարվա առնակատրության առթիվ ձեավոր ծիսական հացեր թիսելու այդ սովորույթը ունեցել են նաև վրացիները: Խերեթիայում ընդունված է եղել համապատասխան ձև ունեցող այդ ծիսական հացով շնորհավորել անասուններին, դինու աակառները, ընտանիքի անդամներին և ալյն, բայ որում, շնորհավորելիս ցայտում էր հայտնվում, որ այդ առնենք դալիք տարվա ընթացքում նույնքան լիքը և կլոր լինի (առասության խորհրդանիշ), որքան այդ հացերն են, Զևազոր, ծիսական հացեր թիսելու և դրանց հետ կապված դրեթե նույնական ծեսերն առկա էին նաև ինդիոյների մեջ, Ավանդական նոր տարվա տոն կիլաչունների համար նույնպես ընուրոշ էր ձեավոր ծիսական հացերի առկայությունը: Փարթիսում նոր աարվա առթիվ թիսվող այդ ձեավոր հացը նույնպես կոչվում էր «Բասիլ», որը մի կլոր հաց էր, մեշաեղը խաչ դժված: Խաչը, նոր աարուց հետո երրորդ օրը կարգում էր և նեավում ամբարը, «Թող այս ամբարի հացը անսպառ և առատ լինի» բանաձեկի արասանությամբ:

<sup>36</sup> «Ազգագրական հանդես», 1903, հ. X, էջ 249.

<sup>37</sup> Նույն աեզում, էջ 245:

<sup>38</sup> Հր. Աճառյան, Հայերն արմատական բառարան, հ. Ա. էջ 415: Սա. նազենյան, «Մասիս», 1884, էջ 200:

<sup>39</sup> Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա. էջ 392: «Նոր բառգիրք Հայկակեան լեզուի», Հր. Աճառյան, Հայերն արմատական բառարան:

<sup>40</sup> Տե՛ս Ջ. Ռխաձե, Իз истории хозяйственного быта грузинского народа, Автореферат, Тбилиси, 1954:

<sup>41</sup> «Նոր բառգիրք Հայկակեան լեզվի», էջ 314: Հր. Աճառյան, Արմատական բառարան, էջ 540—541, Սա. նազենյան, «Մասիս», 1884, էջ 200:

Ամանորի ձեւվոր հացերի մեջ լինուած էին զանաղան կենդանիների և թոշունների նմանվող հացիկներ, որոնք ընության տարբեր ուժերի խորհրդանիշներ էին: Հիշենք, որ հայ ժողովուրդը ընության դարթոնքի պաշտամունքը, նոր սկսվող տնաեսական տարվա առաջին օրվա պաշտամունքը կապում էր օճանման վիշտակների և արագիլի հետ<sup>43</sup>:

Բասիլիսկոս և Կասիլիսկոս բառերի հայերն հոմանիջը քարրն է: Հնդեվրոպական արմամա է, և նույն՝ թունավոր օծ նշանակությամբ, մաել է շատ լեղուների մեջ: Այդ հնագույն սովորութիւն և զաղտփարի հետքերը մնացել են, օրինակ, «Մարտի 9-ին լավլագր ընին»<sup>44</sup> ժողովրդական ասացվածքի մեջ, ուր որոշակիորեն արադիլը կապվում է դարնան և, մանավանդ, ընության դարթոնքի հետ:

Առսկ կտոտարման ժամանակով քրիստոնեական նոր տարվա հետ առնչվող ձեւավոր հացեր թիսելու, դրանցով նոր սկսվող տարվա բարեկեցությունը գուշակելու այդ ծիսական սովորույթը ընապաշտական բովանդակություն ունի և ծագմամբ ու էությամբ կապվում է զոհաբերական՝ իմաստ ունեցող ծեսերի հետ: Պատահական չէ նաև, որ ձեւավոր հացերը նմանվում են դաշտավարական կամ արհեստավորական դործիքների, անասնտպահական կենցաղի հետ կապված՝ անասունների, և կամ այն, երբ ծեսը որևէ կերպ կտպվում է տնտեսության այս ճյուղերի հետ: Այս և նման ծեսերի նպաաակն էր նոր սկսվող անաեսական աարվա, վերածնվող արեի ու ընության հետ ապահովել տնտեսության բոլոր ճյուղերի անխափան աշխաաանքը, աղաաալ տնասուններին ուղնշացումից և ապահովել երկրագործության արդյունքները: Անասունների ուժի, առողջության և հողի բերքաավության նկատմամբ հոգատարությունն է: որ արաաայտվում է նոր տարվա առնակատարությանն ուղեկցող այս ծեսերի մեջ<sup>45</sup>,

Իրենց առաջացման ժամանակ ժողովրդի զարգացման ամենանախնական ընապաշտական

<sup>43</sup> Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երեան, 1944, նույնի թրաաասի կուտը հայերի մուա («Սովետական գրականություն», 1940, № 6):

<sup>44</sup> Ար. Ղանալանիան, Առածանի, էջ 241: Այդ մաայնության ալեալ արտահայտությունների մասին աես նաև Ա. Մեացականյան, Հայկական գարդարվեստ, Երեան, 1955, էջ 524:

<sup>45</sup> Նույն նպաաակով ձեւավոր հացեր թիսելու նմանօրինակ սովորույթը առկա է աշխարհի շատ ժողովրդների մեջ: Տե՛ս Ա. Փրեզեր, Զօլոտա ետք, Մ., 1928, վալ. III.

փուկերի հետ կապվող այդ ծեսերի դեմ քրիստոնեական եկեղեցին ստիպված է եղել պայքարել իր դոյության ամրող ընթացքում: Այդ պայքարի առանձին դրսեորումներ են միայն մեղ հասել, այդ թվում նաև ընապաշտական ծաղում ունեցող ձեւավոր հացեր թիսելու և նրանց հետ կապված ծեսերի դեմ ուղղված պայքարի հետքեր:

XIII դ. գիտական, մանկավարժ և եկեղեցական նշանավոր գործիշ Վանական (Հովհաննես) վարդապետն իր ոՅադագս տարեմուաին և առոի մեջ հետաքրքիր վկայություն է թողել այդ պայքարի մասին: Նա հատուկ ուշագրություն է դարձրել պատմության խորքերից մինչև իր ժամանակները հասած Ամանորի ընապաշտական սովորույթներին և իր ճառի մեջ աշխաաում է ժողովրդին ցույց աալ դրանց անօգուա ու անտեղի լինելը<sup>46</sup>:

Խոսելով հրեաների Ամանորի սովորության, մասնավորապես նոր աարվա կապակցությամբ իրար շնորհավորելու և նվերներ աալու մասին, Վանական վարդապետը նկատում է:

«Ճնոյն և մենք կատարեմք ընծայելով միմեանց և այլոց, ընաանեաց և աւտարեաց թէ հոգեկան ինչ և թէ մարմնական: Առնէ ինչ և հեթանոսն՝ թանձրադոյն և մարմնական, որպէս այն, որ զհացն բոլորավզէր առնել սովոր են, որպէս թէ բոլոր աարիս, անցեալն և որ առաջիկայ շահաւոր և խագաղութեամբ եղել և լինի, զի ի ժամանակիս սովորարար վարիմք զայս սակաւ պատճառս աճեցուցանել, թէ առ նոսա և թէ առ այլ աղդ անդուսա սկսեալը<sup>47</sup>: Այդ ծիսակտն սովորույթները, ինչպես տեսնում ենք, գալիս են հնից, կամ, ինչպես ներկայացնում է Վանական վարդապետը՝ «հեթանոս» ժամանակներից:

Պարզ երեւմ էր, որ Վանական վարդապետի մատնանշած մթոլորավզերը հացերը, թե տեսքով, թե դրանց հետ կապված զաղափարախոսսությամբ նոր աարվա առթիվ թիսվող ձեւավործիսական հացերն են, որոնք միջնադարում, XIX դ., երեամն մինչև XX դ. սկիզբը ժողովրդի աշքում դալիք անաեսական տարվա ապահովվածության խորհրդանշաններն են համարվել:

<sup>46</sup> Գիտական նյութերի ժողովածու, Մաս. № 1, էջ 152—169: Ճառն հրապարակող է: Խափեկանը այսպես է արժեքագորում այն: «Յաղագս աարեմաին աշխատությունը շարագրված է ոչ թե ժամանակի գիտական նեղ շրջանակների, առ լայն հասարկության համար: Ճառի ձեռվ շարագրված աշխատությունը կարդացվել է եկեղեցիներում տարեմուաի օրը (օգաստոսի 11-ին), րազմաթիվ հանդիսականների ներկայությամբ (նույն աեղում, էջ 152):

<sup>47</sup> Նույն աեղում, էջ 158: